

ԻՐԱՎՈՒՆԿ

Rev. Père G. Kalémkarian Mechitaristengasse
M 4 Vienne

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Կեցանեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (Երկու քիւր մեկ
ճարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԻՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկն հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուշկարիա)
Редация на вѣст.
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղող գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դատաւո-
նեալ միայն կը հրատարակուին աւ-
րոյդովին կամ մասամբ.
Դրանոցման տողը 20 սանթիմ. երե-
սեակ աւելի անգամներու համար 20 0/0
գնդ կը չինի:

Զատական տօներուն առթիւ
յառաջիկայ չորեքշաբթի իրա-
ւունք չի պիտի հրատարակուի:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Առ Արժ. Երիցուն, Պատ. Հո-
գաբարձութիւն եւ ազնիւ ժողո-
վորդս Հայոց Ռոմանիոյ:

Վեհափառ Հայրապետ Ազգիս
Տ. Տ. Մկրտիչ Սրբազնագոյն Կա-
թողիկոսն ամենայն Հայոց, փա-
փազելով որ Եւրոպիոյ մէջ ցրուեալ
իւր հօտն ունենայ մի Եպիսկոպոս
հրաւիրեց զմեզ Մարտիկի ի Ս.
Էլմիածին եւ իւր բարձր փառահա-
լութեան արժանի համարելով զմեզ
ձեռնադրեց Եպիսկոպոս ի վերայ
Հայոց Եւրոպիոյ, ի թիւս որոց
համարելով նաեւ զՌոմանիայս
իւրեանց միջովայրի եւ այլ յար-
մարութեամբք:

Իրաւ է թէ՛ Կ. Պօլսոյ Ազգ.
Պատրիարքարանի կողմէ 10-20
տարին միանգամ եպիսկոպոս մը
կայցելէր ի Ռոմանիա եւ կանցնէր
կերթար, բայց վեհ. Հայրիկն ու-
ղելով աւելի օգտակար ընել Ռո-
մանիայոց համար հովուական
այս դրութիւնը՝ հրամայեց որ
նախ Աւստրո-Հունգարիայէն եւ Ռո-
մանիայէն սկսեմք մեր այցելու-
թիւններն եւ այսուհետեւ ալ մէկ
կամ երկու տարին անգամ մը այ-
ցելեմք եւ Պատ. Հոգաբարձու-
թեանց հետ համերաշխ սիրով աշ-
խատեմք ի փառս Ս. Եկեղեցւոյն:

Ուստի Բարեկի Օսմանեան դեա-
պանատունէն մեզ տրուած անցա-
գըրին վրայ կատարուելով ամեն
օրինական գործողութիւնք մը-
տանք ի Ռոմանիա, եւ Պօլսոյնի
ու Եւրոպիայի եկեղեցեաց մէջ միմի-
րեցինք մեր բարեպաշտ ժողովուրդը
եւ օրհնութիւններ կարգացինք Ռո-
մանիոյ թագաւորութեան եւ ժո-
ղովուրդեան համար:

Այն ինչ պատրաստուած էինք
Եւրոպիայի անցնել ի Ռոմանիա՝ ահա յա-
կարծ արգիւնեցանք եւ ստիպուե-
ցանք դառնալ ի Սուլայա: Այս
յանկարծական արգիւնեցումս
իմանալու համար գիմեցինք Պու-
րէշի նշանաւոր ազգայնոց, Եւ-

չի, Ֆօքշանի, Պօլսոյնի եւ Ռո-
մանի Պատ. Հոգաբարձութեանց,
որոց, ինչպէս Սուլայի Պատ. Հո-
գաբարձութեան, այս առթիւ,
նուիրած ջանից համար կը պար-
տիմք խորին շնորհակալութիւն-
ներ:

Հակառակ պատուաւոր միջնոր-
դութեանց՝ մեծ եղաւ մեր ցաւն՝
երբ լսեցինք թէ Պուրէշի Տիար
Նախարարապետն ընդգիմացած է,
ըսելով թէ՛ մեր մասին գէշ տեղե-
կութիւններ հասած են իրեն:

Մենք մեր բաւն եւ հինգամեայ
այլ եւ այլ նշանաւոր պաշտօնավա-
րութեանց մէջ կասկածելի որ եւ
իցէ մի ընթացք երբեք չեմք ու-
նեցած, հետեւաբար Տիար Նա-
խարարապետին հասած այդ գէշ
տեղեկութիւնք բացարձակ ար-
դիւնք են զբարոյսութեան:

Արգարեւ իբրեւ ամենատրուա-
յան կերտաց Գրիստոսի այս ծանր
նախատանաց դէմ «եղէ ես որպէս
խուլ՝ զի ոչ լսէ, որպէս համր՝ որ
ոչ բանայ զբերան իւր»: սակայն
վատահ եմք թէ ճշմարտութիւնը չը
պիտի լուէ եւ ուշ կամ կանուխ
պիտի յայտնուի մեր անմեղութիւնը:

Արդ սիրելիք իմ, մտադիր լի-
նելով մօտ ժամանակէն մեկնել, եւ
ցաւելով որ այս անգամ չը կըցայ
անցածք տեսնել զձեզ, ներկայ
չըլարեքականաւ կը հաղորդեմ
Ձեզ Ս. Էլմիածին եւ ամենայն Հա-
յոց Վեհափառ եւ Սրբազնագոյն
Կաթողիկոսի հայրապետական ող-
ջոյնն եւ օրհնութիւնները:

Կը յորդորեմ զՁեզ յանուն Նո-
րին Ս. Օթուլեան՝ որ ամեն ժա-
մանակէ աւելի հաւատարիմ մնաք
Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ,
ամուր պահէք Ձեր ազգութեան
պատիւը՝ որ Ձեր արժանայիշա-
տակ նախահայրերէն, իբրեւ մի
սուրբ աւանդ, ձեզ յանձնուած է:
Կըթէք ձեր զաւակները հայ կը-
րօնքով եւ հայ հոգւով, հայ սըր-
տով եւ հայ լեզուով, սիրէք զի-
ւար, հաւածելով ձեր մէջէն նա-
խանձն ու ատելութիւն, քսու բան-
սարկութիւն եւ այն ամեն չարիք-
ներն՝ որք ընտանիքներ կը կոր-
ծանեն եւ ազգեր կ'օղջացունեն:
Եւ վերջապէս շնչեղով կը յորդո-

րեմ որ ձեր աւանդական պարկեշ-
տութեամբ, ժրջան գործունէու-
թեամբ եւ անխախտ հաւատար-
մութեամբ՝ բարի եւ օրինակելի
քաղաքացիներ հանդիսանաք, ո՛ւր
ինչպէս մինչեւ ցարդ՝ նոյնպէս այ-
սուհետեւ ալ փառաւոր պահէք
հայ անունն Ռոմանիոյ մէջ:

Յոյս յայտնելով որ շնորհիւ
Տիարն ի պատեհ ժամանակի դարձ-
եալ կուգամ առ Ձեզ եւ յայնժամ
բերան ի բերան կը խօսիմ, առ
այժմ կը բաւականանամ նուիրել
Ձեր ամենեցուն իմ սիրոյ ողջոյնն
եւ օրհնութիւններս, պաղատելով
առ Աստուած՝ զի զձեզ զամենեւ-
եանդ, հանդերձ ընտանեօք եւ պա-
րագայիւք, պահէ եւ պահպանէ
յառողջութեան եւ ի յաջողութեան
ի խաղաղութեան եւ ի բարօրու-
թեան այժմ եւ յաւիտեանս:

Մնամք աղօթարար
Գևորգ Եպիս. Եշրոպիոյ

Սուլայա-Պուրէշի

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ

ՀԵՐՔՈՒՄ

Շուկա 12 Ապրիլ 99

Կը խնդրուի որ հաճիք յետագայ գը-
րութիւնը Ձեր օգտաշատ թերթին
մէջ հիւրընկալել, կանխաւ ընդունելով
մեր սրտագին շնորհակալեաց անկեղծ
հաւատարմքը:

Բիզակնդիւն լրագրին վերջին թիւե-
րէն մէկուն մէջ մեծ զարմացումով
կարդացինք տեղական ինչ ինչ լուրեր,
որոնք, ցաւ է ըսել ճշմարտութեան
նշոյն իսկ կրելէ բոլորովին հեռի էին:
Հոգաբարձութիւնս թէեւ աւելորդ կը
համարէր այդ անտեղի եւ յիբիւրուած
գրութեան պատասխանել, սակայն ար-
տասանման ազգայնեան զայնակ-
ղեալ միտքերը լուսաբանելու միակ
մտադրութեամբ հարկ կըզգայ իրողու-
թիւններն իրենց իսկական գոյներով
ներկայացնել, եւ միանգամ ընդ միշտ
յոմորել Տիար լրատուն որ բարեհաճի,
գիտել իր մօտիկ տեղի ունեցած գոր-
ծին եւ խղճի ձայնին հետեւած՝ հաղոր-
դել զանոնք լրագրի մը խմբագրին, ինչ
որ աւագ ու սրբազան պարտականու-
թիւնն է լրատուի մը կամ թղթակցի
մը:

99 փետր. 1-ին արական վարժարա-
նին սրահը, ազգ. երկսեռ վարժարան-
ներուն ի նպաստ տրուեցաւ նուագա-
հանդէս մը առաջնորդութեամբ քաղա-
վարժ հայ դաշնականարի մը: Նուագա-
հանդէսն, որուն մասնակցեցան քաղա-
քիս պատուաւոր ընտանիքներու օրի-
որդներ, խիստ փայլուն յաջողութիւն
մը ունեցաւ: Նոյն օրը բեմը «չը կոր-
ծանեցաւ» այլ փետր. 25 վարդանանց
հանդիսին օրը կոտորեցաւ բեմը, սակայն
անմիջապէս նորոգուելով վերստին հան-
դէսը շարունակուեցաւ ամենայն օրի-
նաւորութեամբ: Մեր սարքած նուա-
գահանդէսն Ազգային հիւանդանոցի ի
նպաստ տրուած նուագահանդէսէն շատ
առաջ տեղի ունեցաւ: մինչդեռ Տիար
լրատուն կը հաղորդէր թէ մենք «կղզ-
Հիւանդանոցի տրուած նուագահանդէ-
սին յաջողութեամբ: Եւ անկողմ» ձեռ-
նարկած էինք այս բարեպաշտ գոր-
ծին (որքան հակասութիւն եւ չարա-
մտութիւն): Օր. դաստիարակութիւնն ա-
ռանձին երկու անգամ բեմն եղաւ եւ
մեծ յաջողութեամբ երկու կտորներ
երգեց, ոչ մարիու, ոչ ալ մարմիւր
վայրկեաններ ունեցաւ, ինչ որ լրա-
տուն բոլորովին տարբեր գոյներով կը
նկարագրէր: Այս նուագահանդէսին
կազմակերպութիւնէն բնաւ չի վնասուե-
ցաւ իզական վարժարանը, ոչ ալ 15
օր դասերը դադրեցան, որովհետեւ եր-
գող օրիորդներուն մէջ միայն երեք ա-
շակերտուէի կը գտնուէր ընդ ամե-
նը:

Ահա իրողութիւնն իր իսկական գոյ-
ներով: չի կրցինք հասկնալ թէ՛ ի՞նչ
չաւ ունի լրատուն տեղական լուրերն
այսքան չարամտօրէն խեղաթիւրելուն
մէջ:

Անցած տարի, դպրոցական տարեը-
ջանին՝ ազնիւ վարժարանի պաշտօն-
եաներու փոփոխութեան առթիւ՝ զըտ-
նուեցան մէկ երկու կարճամիտներ եւ
նախանձաբեկ անձեր, որոնք ջանահար
եղան իզական վարժարանն անխախտ-
ձեղի դիրքի մը մէջ ցոյց տալ, սակայն
արդարութեան լոյսէն փախչող մարդոց
նման միշտ մութին մէջ գործեցին ա-
ռանց ճակատաբաց հրապարակ ելլելու:
Այսպիսի ընթացք մը, ինչպէս յայտնի
է, ճշմարիտ եւ անկեղծ յառաջդիմաւոր
անձերու գործ չէ բնաւ: Արդի դաստի-
արակութիւնն խղճամիտ, պարկեշտաբա-
րոյ օրիորդ մըն է, որ գիտցած է սի-
րել տալ զինքն իր աշակերտութիւններուն
եւ յարգելի ըրած անոնց ծնողքերն:

Ծաւ մը միայն եթէ ունինք, այն է
թէ՛ ի՞նչպէս Բիզակնդիւն լրագրի Տիար
խմբագրին այսքան չարամտօրէն եւ
յայտնապէս խեղաթիւրուած գրութիւն
մը կը հիւրընկալէ իր թերթին մէջ:


Այո՛, լաւ գիտենք որ լուրը ընտա-
գատութիւնը յառաջդիմութեան խթանն

է եւ կատարելագործումի միակ միջոցը, սակայն չար նախանձէ գործուած անազնիւ քննադատութիւնն ալ փոքրագիւնեբու եւ յետադիմականեբու յատուկ է: Ասիկա կը կործանէ, կը քանդէ, իսկ անիկա կը վերանորոգէ, կը շինէ: Նուազահանգէսին մասնակցող օրիորդներն աւելի խրախոյսի պէտք ունէին, վասնզի արուեստագէտներ չէին ասոնք, այլ բարենպաստակ ձեռնարկի մը համար անձնուիրաբար այնքան աշխատութիւն յանձն առնող դպրոցասէր օրիորդներ, որոնք չի վարանեցան, ինչպէս կը պատահի սովորաբար գաւառները, բեմը ելլել: Այս մասին բարեպաշտ ատիժը կը ներկանայ մեզի մեր ջերմ շնորհակալիքը յայտնել նաեւ հրապարակաւ իրենց եւ նուազահանգէսը կազմակերպելու սատարող ազնուասիրտ ու կրթասէր տիկիններուն:

Ի՛ վերաց հոգաբարձու թեան Աղբ. Երեսեռ Վարժարանաց Շումայի:

ԱՏԵՆԱԴՊԻՐ	ԱՏԵՆԱՊԵՏ
Թորոս համի	Սողոմոն
Սեփանեան	Պոյաճեան

ԿՐԵՏԷ



Հալէբա, քաղաքին ձախ կողմը, ծովեզերքին վրայ, բարձր դիրքով օգուէտ վայր մըն է. հոս կը բռնակի Եօրկիոս իշխանը, հոս են հիւպատոսներուն ինչպէսնաեւ հարուստ գասակարգին տուները, ամուս եղանակին Հանիայի ժողովուրդը հոս կուգայ իբր ամպուանոց: Հանեայէն մինչեւ Հալէբա գացող իւրճուղին, որուն մեծ մասը շինուած է եւ մնացած մասն ալ շուտով աւարտելու համար աշխատութիւնք փութով կը կատարուին, Գաղղիացւոց կողմանէ կը շինուի:

Կղզւոյն բնակիչներն են Յոյն, Օսմանցի, Պէնկագեան Արաբներ. ասոնցմէ զատ կան, մի քանի ընտանիք Հրէայ եւ մի քանի Հայեր: Հոս Յոյներ մեծամասնութիւն կը կազմեն թէ քաղաքին մէջ եւ թէ շրջակայքը: Հայերը կը զբաղին

սրճակովութեամբ գուրու խահուէճի (թահմիզ), կան մի քանի բեռնակիրներ, մանրավաճառներ, կան մի քանի խանութպան վաճառականներ ալ: Քաղաքին մէջ աւան մէկ քայլի մարդ կը հանդիպի չորս տէրութեանց զօրականներու եւ զօրքերու որոնք իրենց համազգեստներու զանազանութեամբ «բանորամա» մը կը կազմեն:

Ընդհանուր լեզուն է յունարէն, իսկ շատ քիչեր կը հասկնան եւ կը խօսին տաճկերէն լեզուն, ըլլան իսկ տաճիկ, եւ այս խօսակցութիւնն ալ օտարականներու հետ. եթէ տեղացի թուրքեր մէկգմէկ դիմաւորեն բարենին իսկ յունարէն է. դիմագծերնուն ալ չէ կարելի զանազանել յոյն տաճկէն:

Չորս տէրութեանց զինւորներու պահակներ կարգաւ կը պահպանեն (նէօպէթ կը կենան) պաշտօնակոն վայրերը, ինչպէս են մաքսատու, կառավարական պաշտօնատունը, «լիման տայրիւսին», իշխանին պալատը եւ ամբողջ պահականոցները: Հանեայի պարսպէն քիչ հեռի եւ Հալէբա-քափուսի մօտ, Սուտայի ճամբուն վրայ կը գրտնուի հանրային պարտէզ եւ ասոր մէջ ալ դէպի քաղաք ժողովարան: Պարտէզին ճիշդ քովը եւ դէպի Սուտայի կողմը կը գտնուի «Մէճիտիյէ քըշլասի» կոչուած զօրանոցը ուր այժմ կը բնակին իտալական զօրքերը: Մէճիտիյէ զօրանոցէն դէպի Հալէբա գացող ճամբուն վրայ կը գտնուի հոյակապ հիւանդանոց մը որն որ հազիւ աւարտած է 8 տարուան աշխատութեան յետոյ եւ ուր կը բնակին այժմ գաղթական յոյներ. կըսուի թէ այս շէնքը պիտի ծառայէ իբր կառավարական պաշտօնատուն:

Հանեա կը կառավարեն առժամակէս Գաղղիացիք եւ իտալացիք: Գաղղիացիք պարսպէն ներս, իսկ

իտալացիք պարսպէն դուրս, մինչեւ Ռէթիմօյի շրջակայքը կը հըրամայեն. Հանեա գտնուող միջազային զօրաց վերին ընդհանուր հրամանատարութիւնն յանձնուած է Գաղղիացի գնդապետ Սթենքերի:

Կղզւոյն ընդհանուր բերքերն են, ձէթ, ձիթապտուղ, եղջերենի (քէչէ պուշնուզու), աճառ, չոր խաղող, գինի, նարինջ, մանտարին: Ամբողջ ալիւր օտար երկիրներէ կը ներմուծուի, ինչու որ այս կղզին որ կարող եղած է անցելուսն իր բնակիչները ապրեցնելէ յետոյ ցորեն արտադրել, սոյն վերջին 30 տարուան միջոցին չէ կարող եղած հողագործութեամբ զբաղիլ, որով հարկադրուած է դուրսէն առնել իրեն պէտք եղած ալիւրը: Բնակչաց թիւը կը հաշուի իբր 180,000. որոյ մեծագոյն մասը յոյն է: Հանեայի ժողովրդեան մեծ մասը թէ օտարներու հետ շփուելով եւ թէ կղզին դուրս պանտրտացած ըլլալով քիչ շատ քաղաքացիութեամբ են. իսկ շրջակայ գիւղերու նաեւ ամբողջ կղզւոյն մէջ գրտնուած գիւղերու բնակիչք ցարդ կէս վայրիներ վիճակ մը ունին, բայց եւ այնպէս հիւրասէր ժողովուրդ են: Կղզւոյն բնակիչք գրեթէ մեծ մասամբ ուժեղ, երկայնահասակ եւ գեր մարդիկ են. հագուստին է «էնթարիշալվար» ոտքերին ճերմակ մոյկ, մոյկին եւ շալվարին մէջտեղը անպատճառ չորս մատի չափ բաց մը կայ, ուրկէ մարմինը կը տեսնուի. յոյները իբր գլխարկ գլուխին սեւ թաշկինակ մը, իսկ թուրքերը ճերմակ կամ կարմիր թաշկինակ կը կապեն:


Հանեայէն ծովու ճամբով չորս, չորս ուկէս, իսկ ցամաքի ճամբով մէկ ժամ հեռու կը գտնուի Սուտա, համանուն ծովախորշին վրայ: Սոյն ծովախորշին երկայնութիւնն է 18 ծովային մղոն. բնութիւնը

կարծես այն ծովախորշը դրսի յարձակմանց դէմ պաշտպանելու համար ճիշդ բերանը փոքր կղզի մը ստեղծած է որ տաճկաց ժամանակէն մնացած ամբողջութեան շրջապատուած է. սոյն կղզւոյն երկու կողմէն միայն մէկ մէկ շոգենաւ կրնայ անցնիլ:

Սուտայի ծովախորշին մէջ օսմանցիք ունէին մի նաւարան, որուն գործիքները այժմ Պոլիս կը փոխադրուին: Այս ծովախորշին մէջ է որ կը մնան կրէտէի առժամակէս իշխող չորս տէրութեանց զրահաւորները: Սուտա գիւղաքաղաքը ծովախորշին ձախ եզերաց վրայ շինուած է. նաեւ բանէն տասն վայրկեան հեռու. օղը շատ տաք եւ տենդոտ է, շրջակայքը գտնուած ճախճախոտ վայրերու եւ նաւարանին պատճառաւ, Սուտայէն մինչեւ Հանեա տանող շոտէին երկայնութիւնն է 6 մղոն որ աւարտած է իտալացի ձեռքը:

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ



Յաւ ի սիրտ տեսնելով թէ ամենապարզ մէկ դէպք մը հրապարակային քաջքշուքի տեղի տուած է, ես պարտաւորութիւն մը զգացի իմ ներկայութեամբս տեղի ունեցած այդ անցքի մասին երկուսով բացատրութիւն տալ:

Պ. խաչիկ Մարտիրոսեան ուշատես ինձ առաջարկեց զինքը «Իրաւունք»-ի խմբագրատունը առաջնորդել. միտադ գացինք: Մարտիրոսեան Պ. խմբագրին յայտնեց թէ իր հետ տեսնուիլ կուզէ ու քանի մը նոր բաժանորդաց հասցէներ պիտի տայ. բայց ժամանակը ուշ ըլլալուն պատճառաւ առաւօտուն գալ խոստանալով մնալ

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԵ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գ.

(3)

1888 սեպտեմբերի սկիզբէն Վահրամ մասնաւոր դասեր կուտար Յովհաննէս աղայի մէկհատիկ աղջկանը օրիորդ Հրանդին:

Հրանդը այդ ատեն տասնընչորս տարեկան էր. գեղանազ աղջիկ մը, միջին հասակով, աչքերը յօնքերը սեւ, թխագէժ, կանոնաւոր դէմք մը, նայուածքը աղու. թիթեւ կարմիր մը կերանդէր իր երկու այտերը. քնքոյշ բառ մը բառական էր ըսել իրեն եւ ահա այտին կարմիրը աւելի կենդանի ցոլք մը կ'առնէր. այն պարսպային սկանդալիք անսովոր պայծառութեամբ մը կը վառէին անասելի հրապոյր մը տալով իր դէմքին ամբողջութեանը: Ուշիմ աղջկան մը անունը կը վսիկէր. աղնիւ պղտուէր մօր մը ինամքին տակ առած էր իր նախնական առտին դաստիարակութիւնը. մօրը, Տիկին

Վերգինէի միակ յոյսը եւ ակնկալութիւնն էր. միեւնոյն բանը հօրը համար որ «գոհար» անունով կը յորջորջէր զայն:

Հրանդը քաղաքի ազգային վարժարանէն դուրս եկած էր 1888ի ամառը. ուսումնարան մէջ բաւական լաւ էր եւ սակայն իր մտաւոր ընդունակութիւնները ցոյց կուտային թէ նոր ընթացքով մը աւելի կրնար ըլլալ: Հայրը եւ մայրը միեւնոյն գաղափարը ունէին այս մասին: Յովհաննէս աղան թէեւ անուս այսու հանդերձ ջերմ փափազող «յոգ բանին վերջապէս իր աղջկան գորգացումը աւելի ամուր կուտանի մը կ'պելու վճռական որոշումը տուաւ. իրեն համար առ այդ նիւթական զրծուարութիւն մը չը կար. կրնար մասնաւոր դասատու մը վարձել որ չափաթակն քանի մը դասերով իր բողձացած վիճակին պէտք է հասցնէր Հրանդին մաքր մակարդակը: Խնդրին զրծուարութիւնը դասատուի մը ընտրութեան շուրջը կը դառնար:

Ճիշդ այս բանին վրայ կը մտածէր 88ի սեպտեմբերին եւ արժանաւորի մը ընտրութեամբ գործնականապէս նպատակին հասնիլ կը խորհէր. յանկարծ

— Ինչո՞ւ համար միտքս կը նեղմըսու, ինչ տեղը կայ հեռուները երթալ, Պոլիսէն կամ ուրիշ տեղէ դասատու մը բերելու աւելորդ եւ անբարեկամութեան մը հոգեբով տանջուիլ. հոս, քովս, կարող մէկը չի պակսիր ինձ, Վահրամը. իր զարգացումը եւ անպարտ բարոյականը ինձ համար գաղտնիք չունին. խօսիմ իրեն եւ շաբաթական երեք դասեր թո՛ղ տայ Հրանդին. ան ալ բաւ է աղջկանս »:

Տիկին Վերգինէի հետ այս մասին խորհրդակցութեան մը ետք առաջարկը եղաւ Վահրամին. Վահրամ համակերպեցաւ. այն օրէն իր աշխատութեան փոխարէն երկու օրանոցն ուսկի ամսական յատկացուցաւ իրեն:

Դասախօսութիւնները տեղի կուռնային երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ օրերները. Վահրամ կանոնաւորապէս եւ իրճահարութեամբ կ'աշխատէր իր ոյժի քանակով. պատրաստելու համար Հրանդը. իր միակ ջանքն էր ի թիւս չը հանել Յովհաննէս աղայի իր վրայ ունեցած վստահութիւնը. «Տեղեկակը» մայրեր պատրաստեցէք, ըսած է, կը խորհէր միտքէն, ինչ սր քիչ անգամ զրադեցու

ցեր է զիս. Յովհաննէս աղայի մէկ առաջարկը պատճառ եղաւ որ աւելի ծանրանամ այս պարագային վրան. ալ ասկէ ետք երկու սեփն ալ կրթական գործը խորունկ նշանակութիւն պիտունենայ ինձ համար »:

Հայրերը իրենց գաւակներու մասնաւոր եւ մասնաւոր կարող ուսուցչի վրայ անբացատրելի համակրանք մը կուռնեան, որ երբեմն պաշտուածի կ'հասնի. պիտի կրնանք ըսել որ միեւնոյն բան էր Վահրամն ալ, Հրանդը հօրը, հաւասարապէս մօրը համար այս մասնաւոր 88ի սեպտեմբերէ առջին ան պատուական երկտասարդ Յովհաննէս աղայի առեւտրական գործին մէջ մէկ սիւնն էր եւ իրենց հոգահաշտ «գոհար»ը մասնաւորապէս ու բարոյապէս կը հասունցնէր: Հինգ ամիս հազիւ իկար որ Վահրամ կը դասախօսէր եւ սակայն մեծ տարբերութիւն մը յայտնի կը նկատուէր իր աստուհին հինգ ամիս առաջուան եւ հինգ ամիս ետքը ասի վիճակին մէջ. այդքան ժամանակամիջոց բաւական եղաւ աղջիկը խորհելու այնպիսի կացութեան բերելու ուսուցչին պակաս թողութեամբ աստուհին ինքնաբերաբար լեցնելու կաշխա

բարով քառ և ինձ հետ խմբա-
գրութեանն զստաւ ելաւ : Այս մի-
ջոցին խմբագրութեան մէջ ո՛ր եւ է
անտեղի խօսակցութիւն կամ վի-
ճարանութիւն տեղի չունեցաւ, ոչ
որի կողմէ :

Այն իրիկուն Մարտիրոսեան
«Տիգրան Աճէմեանի հետ պիտի
տեսակցիմ» ըսելով ինձմէ բաժնե-
ւեցաւ :

ՄԻՍՏՔ ՅԱՆՈՐԵԱՆ

14 Ապրիլ 99

Վառնո

Թ. Գ. Սոյն նամակս խմբագրին
յանձնած միջոցիս, նա 1896 տար-
ւոյ բաժանորդաց տետրակը բա-
նալով ինձ ցոյց տուաւ : Խ. Մար-
տիրոսեանի անունը, որուն առջեւ
նշանակուած էր թէ 1896 յունվա-
րէն իրեն թերթը զրկուած է մինչեւ
տարեգլուխ, և իր թերթը միշտ
իրեն գտնուած տեղերը, Շուվա,
յետոյ վառնո և յետոյ Սիլիստրէ
զրկուած է. փոխորէնը վճարու-
մի կայ :

Տեղիս աղջկանց կրթարանին
վերջիս ունեցած վիճակը լուրջ
և հիմնական դարձանի մը կարօտ
և գոյութիւնը պահելու համար
անմիջական կարգադրութիւն մը
անհրաժեշտ ըլլալով, ծնողք հա-
ւաքարար սրտեցին կրթարանին
վերին հսկողութիւնը ու վարչու-
թիւնը յանձնել ուղղակի իրենցմէ
ընտրուած իս ամակալութեան մը :
Ծնողաց միաձայն հաւանութեամբ
խնամակալութիւն ընտրուեցան :

Տիգր. Մարտիրոսեան Ա. տետրակներ

» Բարեկամս Բ. »

» Միտասան տետրակներ »

» Գալֆուիան գանձակետ »

» Նաւարան խորհրդական »

» Թովմանէսեան »

Օր. Գալֆուիան »
խնամակալութիւն ներկայ մար-

տէր : Իր դասերը ընտիր կտորներու,
բարոյաւէտի ու ընթերցանիքէ կը
բաղկանային. վաճարած առաջի մէկ օ-
րէն, դասընթացի միջոցին մեծ ուշա-
դրութեամբ կը ծանրանար կարգացուած
խրատաբանի մը մեծ բառի եւ պար-
բերութեան վրայ : չէր բաւականանար
նոյն իսկ երբ կը տեսնար որ ուշիմ ա-
շակերտներն կարգացածին իմաստը
ըմբռնած այսու հանգիստ ալլապէս զան
չէր կրնար անդադարեմը տարբեր
բառերու բացատրութեամբ : Դաստառ-
ին խղճամբ տղանաութեան արդիւն-
քը քիչ աստիճան տեսնուեցաւ, շատ
անսովոր բան մը Ակնի համար, օր մը
Հրանդի իր հայրը պարտաւորեցաւ որ
իր հասցէին Պոլսէն եւ Կովկասէ եր-
կու թերթի մը մէջ տայ, նոյնպէս քա-
նի մը հաստիկներ որոց մասին վաճար-
մէն հաճութիւն տուած էր : Հրանդ-
այդ հաստիկներն մի քանիսն վաճարած
զատախօսութեան եկած աստիճան կամ ա-
նոր ձեռքը տեսած եւ կամ իր քովը
գտնուած զրադիցական ջոկած էր :
Տարակար չի կայ որ օրիորդին հայրը
եթէ ոչ զրադիցաբար թունդ բնագոյն
մը մշտնապէս անպատմելի հրճուանքով մը
լսեց իր աղջկան եւ առաջին առթիւով

տի սկիզբէն ստանձնելով իր պաշ-
տօնը սկսած է գործառնութեանց,
առաջին օրէն իրեն աշակից և
ձեռնառու ունենալով բարեխնդր
անձ-
նաւորութիւններ, որոնք վարժարա-
նիս աղքատիկ ուսանողներէն
բաւական թուով, հաճած են ի-
րենց պաշտպանութեան ներքեւ
առնել :

Նաեւ մասնաւոր յիշատակու-
թեան արժանի են այն երկսեռ
անձնաւորութիւնները, որոնք անձ-
նուիրաբար կը դասախօսեն Կըր-
թարանիս մէջ և նոյնպէս քաղա-
քիս հանրաժանութիւն հայ բժիշկե-
րէն մին, որ բարեհաճած է անձ-
նուիրաբար ստանձնել առողջապա-
հական հսկողութիւնը :

Ի դիմաց խնամակալութեան
Ատենադպիր Ատենապետ
Արմաւանի Սէրէնա Թ.
Միւնասեան Ծառուորիսան

ԼՐԱՔԱՂ

—)(—

Ամենայն Հայոց Ս. Հայրապետը
որ մարտ 26ին թիֆլիզէն մեկնե-
լով, Սանահինի վանքը այցելած
էր, այն տեղ չորս օր մնալէ ետ-
քը երկաթուղիով Աղեքսանդրա-
բոլ մեկնեց և անկէ ալ կառքով
Էջմիածին :

—Վեհ. Հայրապետը թիֆլիզէ
մեկնելէ առաջ առանձին կոնգր-
կով հրամայեց և Բագուի հայ ե-
կեղեցիներու հոգաբարձութեանց որ
ամէն տարի այդ եկեղեցիներու
հասոյթէն 1,500 ռուպլի զրկին
Շամախի Առաջնորդարանին : Այդ
գումարը պիտի յատկացուի թուա-
կաւոր քահանաներ կարգելու այն
գիւղերուն համար որոնք անհրա-
ժեշտ պէտք ունին հոգեւոր հով-
ուութեան ինչպէս նաեւ Շամախի
թեմին այն քահանաներուն որոնք
նիւթական խեղճ վիճակի մէջ կը

ստորագրուեցաւ երկու թերթի. նոյն-
պէս Պ. . . գրատան գրեց որ զրկուած
գումարի մը փոխարէն իր հասցէին
հանձն Հրանդի ուղած գիրքերը :

Հապա վաճարածի զգացած ուրախու-
թիւնը, ունեցածը անպատեհի աշո-
ղութիւն մըն էր իրեն համար. առա-
ջին աշգամ ըլլալով միտք մը մշակելու
գործին ձեռնարկել եւ այդքան թարմ
ընդունակութիւններ, ջանասիրութեան
գորաւոր բարի կամեցողութիւնը ունե-
ցող աշակերտուհի մը ունենալ քիչ
փառք չէր. միւս կողմէն Հրանդի քա-
ջապէս կը զգար որ ամիսներ առաջ իր
ունեցած մտաւորական անգոյն եւ ա-
նիմաստ խաբարութիւնը դադարած է-
ին. թէ հաստատ եւ ամուր կը զգար
իր քաղիքը եւ թէ իսկապէս զգարու-
թիւններ, գործելու սկսած էր :

Օրական մի քանի ժամեր տնական
զբաղումներու կը նուիրէր ինքզինքը.
կը յիշէր վաճարածի խօսքերը. «Այս օ-
րիորդը մտաւորապէս հասունացած ըսե-
լով՝ առանձին հոգերը անտեսել պէտք
չէ հասկնայ. անկատարութիւն եղած
կըլլայ այդ ընդհանուր առումով. նա
որ նար-պէյի, Ալիշանի, Չերազի կամ
ուրիշի մը մէկ գրուածքին հոգին կըր-

գտնուին

—Թիֆլիզի հարուստ ազգային-
ներէն Պ. Միրզոեան արաբական
գեղեցիկ նժույզ մը նուիրեց և Ս.
Հայրապետին :

—Կովկասի կառավարչական խոր-
հուրդին որոշմամբ, զոր հաստա-
տել է կառավարչապետ Կալիցին
իշխան, դատաստանի ենթարկուելու
են թիֆլիզի քաղաքային վարչու-
թեան երկու հայազգի անգամները՝
Արզուման Երկայնաբաղուկ և Պ.
Խոսրովեան և երկու նախորդ օ-
տարազգի անգամները, ինչպէս
նաեւ Պ. Եւանգուլեան քաղաքա-
գլուխ թիֆլիզի, ամբաստանուած
ըլլալով թէ իրենց պաշտօնավա-
րութեան մէջ յանցանքներ գործած
են : Այս դատին վերահսկողու-
թիւնը յանձնուել է թիֆլիզի
դատական պալատի ընդհ. դատա-
խազի օգնական Պ. Կ. Լիմմեր-
մանի :

—Պուզրէշէն մեզ կը տեղեկաց-
նեն թէ տեղւոյն հայ գաղթական-
ները Հայաստանի սովորոց ինչպէս
իրենց մէջ հանգանակութիւն ընե-
լով 1298 Ֆրանց հաւաքած ու
Պատրիարքարան զրկած են :

Այս պարտաճանաչ ողնիւ հա-
յերը պէտք չէ չփոխել ուղեւորա-
հաւատակ տեղացի հայերուն հետ :
Նոր գաղթականներն են, որ նա-
խաձեռնարկ եղած և յաջողած են
կոկիկ գումար մը գոյությունիւ Մայր
Հայրենիքի մեր թշուառ եղբարց
տառապանքը փոքր ինչ մեղմաց-
նելու ամենագոյնի յապտակաւ :
Բայց միեւնոյն ատեն հաւանական
է որ Պուզրէշի բնիկ հայերէն ալ
մի քանի անձեր մասնակցած ըլլան :

Ալ կարգը վառնայի ազգայնոց
եկած է. և կը հաւատանք թէ
Ս. Զատիկէն անմիջապէս յետոյ
հանգանակութեան պիտի ձեռ-
նարկուի :

—Սերաստիոյ Ազգ. որբանո-

նայ ըմբռնել, վերլուծել եւ կերակուր
պատրաստելու կար կարելու, լաթ լը-
ւալու մէջ կը կաղայ, կնոջական պար-
տաւորութիւններու գէմ ուժգնապէս
մեղանջած կըլլայ : Հայ օրիորդը դպրո-
ցին մէջ առ աշգամ գէթ պիտի սովորի
վալիւնէ կերպով իր լիզու, միեւնոյն
ատեն պիտի աշխատի տանտիկին մը
ըլլալու. բոլորն բովանդակ նշանակու-
թեամբ. իսկ երբ դպրոցէն մեկնի, իր
մտաւորական զարգացումի գործը երե-
սի վրայ չը թողնէ ետք, գործնական-
նապէս առանձին աշխատութիւններու
փորձ ըլլալու համար կարեւոր բաժինը
պիտի ունենայ անոնց մէջէն : Հրա-
նոյ լարուած ուշադրութեամբ կը լսէր
վաճարանի. մայրաքաղաքներու մէջ ե-
ղածին պէս, գաւառական քաղաքներու
մէջ ալ պակաս չին մայրաքաղաքի մէջ
ծնող եւ ապրող մեծահարուստներու
աղջիկներուն պէս ծնողի որոնց համար
զբոսալի ժամանց եւ հաճոյք կայ միայն
աշխարհի մէջ. և թէ մայրաքաղաքային
դաշնակ, սիրոյ անսահմ յիմարութիւն-
ներ, հեշտօրօր պտուտներ ունի, գաւա-
ռացի հարուստին աղջիկն ալ իր ուսե-
լիքները, թանձր զգեստները եւ պը-
տոյաները ունի : Ակնի մէջ գտնուած

ցին մէջ 170 որբեր կը դաստիա-
րակուին որոնց ծախքը բացի բա-
րերարներու կողմէ յատկացուած
20 ռուբլէն, տեղային միջոցներով
կը հոգացուին :

—Երեւանի նահանգական դա-
տարանը մարտի վերջին շաբ-
թուն քաղաքի է հանրային բնու-
թիւն ունեցող դատով մը որ մեծ
հետաքրքրութիւն չարժած էր,
Քաղաքի մէջ շատ տարիէ ի վեր
գրասենեակ մը հաստատուած էր
Ղորղանեաններու կողմէ որոնք տա-
կտաւ դրամ փոխ կուտային կամ
բուն բառովը՝ վաշխառութիւն կը
ընէին : Դատական իշխանութիւնը
գործը իմանալով, քննութիւն բա-
ցաւ, որուն հետեւեալով դատի
ենթարկուեցաւ Պ. Հ. Ղորղանեան :
Վախճան վկաներ ներկայացած է-
ին՝ որոնք լսուեցան երկու օրուան
մէջ : Դատարանը մեղապարտ ճանչ-
նալով Ղորղանեանը՝ իբրեւ վաշ-
խառու՝ դատապարտեց զայն քա-
ղաքային իրաւունքներէ զրկուելու
և տասը տարուան աքսորի՝ Աստ-
րախանի նահանգը :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՅԵ

Րուսիա իմպերատորը Զար Նի-
քոլա հալքէթիւրի Րուսիա գը-
րալընա իտալի վիզիթա իթմէր
իշխն մայիս 22տէ Պուզրէշէ կի-
տէճէր տիր :

—Աճէմիսթան Շահըն Էքիմճի
օղլու Մէլիք Մանսուր Միրզա
խան վիշննայա զիյարէթ իթմէ-
սինտէ Աւստրիա իմպերատորը ա-
նա Լէոբուտ նիշանը պէօյիք խա-
չընը վերմիշ վէ սէրայտա շահա-
տէյէ մախսուս զիյաֆէթ քէշիտէ
օլըմըշ տըր :

կարգ մը ուրիշ կարողութեան տէր ե-
ղողներու հակապատկերն էր Յովհան-
նէս աղայի մատաղ աղջկան վարած
կենցաղը. գովելի չափաւորութիւն մը
կար այդ «գոհար»ին ապրելու եղանա-
կին մէջ. ինչպէս ըսինք արժանաւոր
մօր մը ճշմարիտ խնամքին տակ պըզ-
տիկէն ինքզինքը վարժեցուցեր էր
կանոնաւորութեան. առաւօտուն կա-
նուխ կարթննար. երկու ժամ իր դա-
սերով եւ ընթերցանութեամբ կը զբաղէր
անկից ետքն ալ երկու ժամ առանձին
գործերով. չը մոռնանք ըսելու որ տան
մէջ սպասաւոր մը եւ աղային մը չէին
պակսիր : Յերիկի ճաշէն ետք բաւական
ատեն կը հանգչէր զբօսնելով իր տա-
րեկից ընկերուհիներով իրեն պէս
պարկեշտուհի վարդեր, անկից վերջ
կրկին ձեռք կառնէր իր սիրական գիր-
քերը ու թիւրթիւրը որ իրեն համար
թանկագին գանձեր կը պարունակէին.
մինչեւ որ վերջապէս իր ուսուցչին
վաճարածի զաւուտի ժամը կը հասնէր :

Շ. Կամաւարական

Շարունակելի

